ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ
ՄԱՐԶԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՊԵՏ
ՊԱՐՈՆ ՍՊԱՐՏԱԿ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Մելքոնյան

Հայտնում եմ Ձեզ, որ 2025 թվականի նոյեմբերի 18-ից մինչև 2026 թվականի փետրվարի 17-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել եմ հետևյալ աշխատանքները՝

1. Մասնակցել և իրականացրել եմ պլանային ստուգում՝ Գեղարքունիքի մարզ, ք.Սևան, Սարգիս Սևանեցու փողոց, շենք 6 հասցեում գործունեություն իրականացնող <<ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի թիվ 4 <<Գալիք>> մսուր մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի ճաշարանում:
2. Գեղարքունիքի մարզի ողջ տարածքում իրականացրել եմ հսկողություն՝ հակաանասնահամաճարակային միջոցառումների աշխատանքների նկատմամբ:
3. Ի կատարումն ՀՀ ՍԱՏՄ ղեկավարի 17.11.2023 թ-ի Ն/12269 հանձնարարականի իրականացրել եմ ախտորոշված բրուցելյոզ հիվանդության նկատմամբ վերահսկողություն՝ Գեղարքունիքի մարզի ողջ տարածքով: Հետևել եմ հիվանդ կենդանիների սանիտարական սպանդին և ախտահանության աշխատանքներին՝ տեղում, անձամբ:
4. Համաձայն ՀՀ ՍԱՏՄ ղեկավարի 2026 թվականի հունվարի 30-ի N 181-Ա ՀՀ Գեղարքունիքի մարզի անասնահամաճարակային նշանակության տարածքներում անասնահամաճարակային մշտադիտարկում իրականացնելու մասին հրամանի իրականացրել եմ անասնահամաճարակային մշտադիտարկում Մարտունու <<Կիրակնօրյա անասնաշուկայում>>:
5. Եռամսյակի ընթացքում անմիջական ղեկավարի հանձնարարությամբ մասնակցել և իրականացրել եմ Գեղարքունիքի մարզային կենտրոնի կանոնադրությունից բխող արդյունավետ աշխատանքներ:
6. Ակտիվ մասնակցություն եմ ցուցաբերել գործընկերներիս հետ մասնագիտական քննարկումներին՝ ուղղված սննդամթերքի անվտանգության ապահովման, վերահսկողության ուժեղացման և բնակչությանը մատուցվող սննդամթերքի որակի բարձրացման վերաբերյալ:

ՍԱՏՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՓՈՐՁԱԳԵՏ

ՍԱՐԳԻՍ ԱՎԱԳՅԱՆ

19.02.2026